

Հարյուր և ավելի աշխատողների միջին ցուցակային թիվ հայտարարագրած առևտրային կազմակերպություններում ՀՀ առևտրային բանկերի ընդգրկվածության վերլուծություն

2012 թ. հունվար – դեկտեմբեր ամիսների արդյունքներով

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակված¹ 2012 թ-ի արդյունքներով Հարյուր և ավելի աշխատողների միջին ցուցակային թիվ ունեցողների ցանկում, ՀՀ ավելի քան 70 հազար² առևտրային կազմակերպություններից տեղ են գտել միայն 442 առևտրային կազմակերպություններ, որոնք կազմում են ընդամենի 0.5 տոկոսը: Ընդ որում այս կազմակերպություններից 276-ը կամ 62.4 տոկոսը գտնվում են Երևան քաղաքում (Աղյուսակ 1).

Վայրը	Կազմակերպությունների թիվը	Տոկոսը ընդհանուրի մեջ %
Երևան	307, որից 19-ը բանկեր	62.4
Աբովյան	7	1.6
Գյումրի	14	3.2
Վանաձոր	12	2.3
Մնացածը	102	23.4

Նախ նշենք, որ ՀՀ 21 առևտրային բանկերից 19-ը (կամ բանկայկային համակարգի շուրջ 90 տոկոսը) ներառված են 100 և ավելի աշխատող ունեցողների ցանկում: Բոլոր 442 կազմակերպություններում ընդհանու առմամբ աշխատում են 162,484 մարդ: Նշված 19 առևտրային բանկերում աշխատում են 10,293 մարդ, կամ 6,3 տոկոսը, այն պայմաններում երբ այս ցանկում բանկերը թվով ընդամենը 4.29 տոկոսն են: Այսինքն ցանկում աշխատողների թվերի բաշխման մեջ բանկերը գրավում են առաջնային դիրքեր:

Նկատենք, որ առևտրային բանկերի աշխատողների միջինը՝ 542 մարդ, գերազանցում է մնացած 423 կազմակերպությունների միջինին՝ 360 մարդ:

Բաշխումը առավել լավ պատկերացնելու համար, նշենք, որ 19 առևտրային բանկից ցանկի առաջին 100-յակում են տեղակայված ՀՀ 14 առևտրային բանկերը:

¹ ՀՀ ՊԵԿ - <http://www.taxservice.am/>

² ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը 2010, 2011 և 2012 թթ. հունվար դեկտեմբերին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Ց Ա Ն Կ

2012 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿՁԲԻՑ 100 ԵՎ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԹԻՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

Հ/Հ	Համարը ամբողջ ցանկում	ՀՎՀՀ	Կազմակերպության անվանում	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Հայտարարագրված աշխատողների թիվը
1	2	3	4	5	6
1	18	00400222	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	Երևան	1198
2	26	02566492	ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ	Երևան	1051
3	29	02520007	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ	Երևան	1015
4	32	02201405	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	Երևան	905
5	33	02559077	ՅՈՒՆԻԲԱՆԿ	Երևան	891
6	47	00000291	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	Երևան	654
7	52	01500362	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	Երևան	600
8	60	02500518	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	Երևան	552
9	61	02518512	ԻՆԵԿՈԲԱՆԿ	Երևան	549
10	71	02502212	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	Երևան	488
11	77	02540791	ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ	Երևան	465
12	90	00005409	ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	Երևան	407
13	97	02514855	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	Երևան	392
14	98	02587698	ՊՐՈԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ	Երևան	381
15	225	00001182	ՊՐՈՍԵԹԵՅ ԲԱՆԿ	Երևան	189
16	234	00000826	ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ	Երևան	185
17	332	08602169	ԲՏԱ ԲԱՆԿ	Երևան	135
18	334	01533411	ԱՐՑԱԽԲԱՆԿ ՓԲԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	Երևան	135
19	439	01505323	ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ	Երևան	101